Ապագա
Հանդես

ARAGA
Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies



ISSN 1682-5438

Համար 52 Մարտ, 2013 թ.

No. 52, March 2013

ԱՊԱԳԱ No. Համար 52 (67) 2013 APAGA

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես
An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր
License-holder, Publisher & Editor-in-Chief

էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian, PhD.

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան
POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.apagaonline.com and www.apagamonthly.4t.com
E-mail: apaga98@hotmail.com **ISSN 1682-5438**

Բովանդակություն

Հայերեն **ՄԿՐՏԻՉ ՇԵԼԵՖՑԱՆ. ՎԵՐՋԻՆ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ**

Անգլերեն Հայերը Թուրքիայում

Պարսկերեն Ուրարտական հուշառձանները Իրանում

CONTENTS

Armenian The last Aremenian member of the Turkish parlament

English Armenians in Turkey

Persian Urartian monuments in Iran

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: $ 20 per year Գինը 5000 ռիալ

ՄԿՐՏԻՉ ՇԵԼԵՖՅԱՆ. ՎԵՐՋԻՆ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
Թուրքագետ, բ.գ.թ., դոցենտ

Թուրքիայի, հիմնականում Ստամբուլի՝ Հայոց ցեղասպանությունից հետո գոյատեւած հայ համայնքն ակտիվ ներգրավված չի եղել քաղաքական կյանքում, ինչը տարատեսակ պատճառներ ունի: Թուրքիայի Ազգային մեծ ժողովում եւս հանրապետության հիմնադրումից մինչեւ 1935 *թվականը հայկական համայնքից որեւէ ներկայացուցիչ չի եղել եւ սրանում որոշիչ դեր է խաղացել թուրքական իշխանությունների դիրքորոշումը: Սակայն հարկ ենք համարում նշել, որ մինչեւ* 1935*թ. թուրքական խորհրդարանում եղել է հայկական ծագում ունեցող պատգամավոր՝ Մյունիփ Բոյան, ով ավելի վաղ իսլամ էր ընդունել եւ խզել կապը հայկականության հետ: Նա մի քանի անգամ պատգամավոր է ընտրվել Հաքիարիի եւ Վանի նահանգներից* [1, s.291]:

1935*թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ թուրքական իշխանությունների կամքով եւ թույլտվությամբ Աֆիոնից պատգամավոր է ընտրվում Պերճ Քերեսթեջյանը: Նրա կենսագրության եւ պատգամավորական մանդատ ստանալու հարցում հատկապես առանձնանում են հետեւյալ դրվագները: Այսպես,* 1919*թ. Քերեսթեջյանը տեղեկություն ստանալով, որ Մուսթաֆա Քեմալի* (*հետագայում՝ Աթաթուրք*) *դեմ հարձակում է պատրաստվում, տեղյակ է պահել վերջինիս եւ այդպիսով փրկել նրա կյանքը* [2]: *Բացի այդ, թուրք-հունական պատերազմի ժամանակ իր անձնական միջոցներից բավական մեծ գումար է հատկացրել քեմալական զորքին՝ ռազմամթերք գնելու համար: Եվ վերջապես,* 1923*թ. Լոզանում բանակցությունների ժամանակ Քերեսթեջյանը սատարել է թուրքական պատվիրակությանը եւ անգլիական* «Morning Post» *թերթում բաց նամակ է հղել Անգլիայի արտաքին գործերի նախարար Լորդ Քուրզոնին՝ պահանջելով, որպեսզի անգլիացիները հրաժարվեն Թուրքիայում բնակվող հայերի հովանավորությունից* [2]: *Թուրքիային եւ նրա իշխանություններին Քերեսթեջյանի մատուցած այս*

ծառայությունները 1935թ. վարձատրվեցին պատգամավորական մանդատով, իսկ ավելի վաղ՝ 1934թ. Թուրքայում ազգանվան մասին օրենքի հռչակումից հետո անձամբ Աթաթուրքը նրան «չնորհել» է Թուրքեր (թարգմանաբար՝ թուրք գինվոր) ազգանունը, որը նա գոհունակությամբ ընդունել եւ կիրառել է իր հայկական ազգանվան փոխարեն: Խորհրդարանական գործունեության ժամանակ Քերեսթեջյանի հայկական ինքնությունը երբեւէ առաջնային չի եղել, ավելին՝ նա քննադատել է ազգային փոքրամասնությունների մայրենի լեզուների կիրառման հանգամանքը եւ Թուրքիային նմանեցրել Բաբելոնյան աշտարակին՝ պահանջելով, որպեսզի կառավարությունը միջոցներ ձեռնարկի, որ Թուրքիայում բնակվողները խոսեն միայն թուրքերեն [2]: Հավելենք նաեւ որ Քերեսթեջյանի ակտիվությունը չի նկատվել երբ թուրքական խորհրդարանում քննարկվել եւ միաձայն ընդունվել է ազգային փոքրամասնությունների տնտեսական հալածանքի ամենաբացահայտ օրենքը՝ Ունեցվածքի հարկը, որի միջոցով առաջին հերթին հայկական համայնքը, ըստ էության, ենթարկվեց տնտեսական ցեղասպանության:

Թուրքիայում բազմակուսակցական համակարգի հաստատումից հետո, քաղաքական ասպարեզ մտած Դեմոկրատական կուսակցության ցուցակով պատգամավոր են դառնում երեք հայազգի գործիչներ. 1950-54թթ. Անդրե Վահրամ Բայար Քոջաբրյրքյանը, 1954-57թթ. եւ 1957-60թթ. Զաքար Թարվերը, 1957-60թթ. Մկրտիչ Շելեֆյանը: Ավելի ուշ՝ 1960թ. ռազմական հեղաշրջումից հետո, Թուրքիայի օրենսդիր մարմնում պետության կողմից նշանակվում են երկու հայազգի սենատորներ՝ Հերմինե Աղավնի Գալուստյանը եւ Սահակ Պերճ Թուրանը [1, s.294-295]:

Սակայն վերը թվարկված բոլոր պատգամավորների շարքում հատկապես առանձնանում է Մկրտիչ Շելեֆյանը, որի նպաստը համայնքային եւ ազգային խնդիրներին անուրանալի է: Դրամատիկ զարգացումներով հարուստ իր կյանքի տարբեր փուլերում Մկրտիչ Շելեֆյանը եղել է Թուրքիայի ներքին եւ արտաքին քաղաքականության, Ստամբուլի հայ համայնքի, ինչպես նաեւ գավառներում մնացած իսլամացված հայերի խնդիրների, հետագայում նաեւ Հայաստանի խորհրդային

հանրապետության եւ Սփյուռքի հարաբերությունների կիզակետում:

***

Մկրտիչ Շելեֆյանը ծնվել է 1914թ. Ադափազարում: Հայրը երկաթի վաճառական Գրիգոր Շելեֆյանն էր, իսկ մայրը՝ Քրիստինե Նիկողոսյանը: Հայոց ցեղասպանության ժամանակ Շելեֆյանների ընտանիքը տեղափոխվել եւ ապաստանել է Քյութահիայում: Ցեղասպանության առաջին ալիքից հետո, հրաշքով փրկված ընտանիքը կրկին վերադարձել է Ադափազար, սակայն ավելի ուշ քեմալականների առաջխաղացման ժամանակ տեղափոխվել եւ հաստատվել են Ստամբուլում՝ կորցնելով իրենց ունեցվածքի մեծագույն մասը: Շելեֆյանները խստորեն պահպանել են ազգային նկարագիրը եւ ամենեւին էլ երկրորդական չպետք է համարել այն, որ ընտանիքում հայախոսությունը եղել է բարձր մակարդակի վրա եւ Մկրտիչ Շելեֆյանի մայրը նույնիսկ վատ է տիրապետել թուրքերենին:

Մկրտիչ Շելեֆյանը արդեն երիտասարդ տարիքից ներգրավվել է առեւտրական գործունեության մեջ, իսկ զինվորական ծառայությունից հետո՝ 1941թ. սկսել է կառավարել հոր բիզնեսը՝ երկաթի առեւտուրը: 1950թ. Շելեֆյանը ամուսնացել է կեսարացի վաճառական ընտանիքի զավակ Երջանիկ Թահթաբուրունյանի հետ եւ այս ամուսնությունից ծնվել են նրա երկու զավակները՝ Արդենն ու Քրիստինեն: Գործարարության մեջ Մկրտիչ Շելեֆյանը ունեցել է գլխապտույտ հաջողություններ, որոնք տարբեր տարիներին ասեկոսեների տեղիք են տվել, սակայն բոլորն էլ միակարծիք են եղել նրա առեւտրային ընդունակությունների հարցում: Պոլսահայ գրող Վարդան Կոմիկյանը Շելեֆյանի մասին իր հոդվածում նշում է. «Առեւտրական հանճար մըն էր: Կան որ արուեստագէտ կը ծնին, Շէլլէֆեան վաճառական էր ծնած» [3]:

Իր առեւտրական եւ կազմակերպչական հմտությունների շնորհիվ Մկրտիչ Շելեֆյանը հետզհետե սկսել է որոշիչ դեր խաղալ Ստամբուլի հայ համայնքում: 1951թ. դարձել է Պոլսո հայոց պատրիարք Գարեգին Խաչատուրյանի խորհրդականը, իսկ 1953թ. ընտրվել է Թուրքիայի հայերի ազգային կենտրոնական

վարչության ատենապետ: Այս կառույցը, ըստ էության, Թուրքիայի հայերի կառավարման աշխարհիկ մարմինն էր, իսկ ատենապետը՝ համայնքի ղեկավարը: 1955թ. Մկրտիչ Շելեֆյանը ընտրվել է Ստամբուլի քաղաքապետարանի ավագանի եւ այդ պաշտոնը գրաղեցնում է մինչեւ 1957թ.:

Իր գործունեության հենց սկզբից էլ դրսեւորվել է Շելեֆյանի ազգային նկարագիրը: Դեռեւս 1934թ. ազգանվան օրենքի ընդունումից հետո փորձել են փոխել եւ թուրքացնել նրա ազգանունը՝ դարձնելով Շելեֆօղլու, սակայն նա կտրուկ դեմ է դուրս եկել եւ կարողացել պահպանել իր ազգանունը: Ստամբուլի քաղաքապետարանի ավագանի եղած տարիներին Շելեֆյանը կարողանում է բավական լավ կապեր հաստատել թուրք ամենատարբեր պաշտոնյաների, անգամ վարչապետ Ադնան Մենդերեսի հետ եւ այդ ամենը ծառայեցնել համայնքի շահերին: Այսպես, մեծապես նրա ջանքերով է բացվում Ստամբուլի Սուրբ Խաչ դպրեվանքը, որի կարեւոր գործառույթներից էր Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված եւ ուծացած հագարավոր հայերի երեխաներին Ստամբուլ տեղափոխելով՝ հայեցի կրթություն տալն ու այդ միջոցով ազգային ակունքներին վերադարձնելը: Իր այս գործունեության համար Շելեֆյանը բազմիցս է քննադատվել ազգայնամոլական եւ մոլեռանդ շրջանակների կողմից, որոնք նրան մեղադրել են «մուսուլման» երեխաներին քրիստոնեացնելու մեջ: Այդ տարիներին Մկրտիչ Շելեֆյանը կարողացել է թույլտվություն ստանալ Գալաթիայի քանդված հայկական եկեղեցու վերականգնման համար: Հարկ է հատուկ չեշտել, որ այդ եկեղեցին վերակառուցվել է հայկական ճարտարապետական ոճով, ինչը եզակի երեւույթ է Ստամբուլում: Այս եւ նմանատիպ այլ ծառայությունների համար նա արժանացել է Ստամբուլի հայ համայնքի երախտագիտությանը եւ պատահական չէ, որ Մկրտիչ Շելեֆյանի մահվան օրը՝ 1987թ. դեկտեմբերի 10-ը, համայնքում եւ Պոլսո պատրիարքարանում հայտարարվել է սգո օր:

Իր ակտիվ գործունեությունը, ինչպես նաեւ համայնքում ունեցած հեղինակությունը ստիպել են, որպեսզի Մկրտիչ Շելեֆյանով հետաքրքրվեն թուրքական իշխանությունները եւ 1957թ. խորհրդարանական ընտրություններից առաջ իշխող

Դեմոկրատական կուսակցության կողմից նա առաջարկ է ստացել կուսակցական ցուցակով մասնակցել ընտրություններին: Շելեֆյանը սկզբում մերժել է այդ առաջարկը՝ պատճառաբանելով իր բազմազբաղությունը, սակայն ավելի ուշ տեղի է տվել եւ ընդունել անձամբ Թուրքիայի վարչապետ Ադնան Մենդերեսի առաջարկը մասնակցել ընտրություններին: Ինչպես հետագայում պատմել է Մկրտիչ Շելեֆյանը, նա այդ ժամանակ Պոլսո պատրիարք Գարեգին Խաչատուրյանի հետ եղել է Լոնդոնում եւ վարչապետ Մենդերեսը այնտեղի թուրքական դեսպանատան միջոցով գտել է Շելեֆյանին եւ հեռախոսային զրույցում համոզել է տալ իր համաձայնությունը խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար [4, 10.08.1984]: Ավելորդ չէ նշել, որ Շելեֆյանի դրական պատասխանի վրա որոշիչ ազդեցություն է ունեցել նաեւ Գարեգին պատրիարքի դիրքորոշումը: Այս հարցում եւ՛ հոգեւորական, եւ՛ աշխարհիկ գործիչների համար առաջնային է եղել հայ համայնքի շահերը, իսկ պատգամավորի հանգամանքը Շելեֆյանին թույլ կտար էլ ավելի արդյունավետ նպաստել համայնքային որոշ խնդիրների լուծմանը: Սակայն Շելեֆյանին պատգամավոր առաջադրելով՝ Դեմոկրատական կուսակցությունը եւս ակնկալում էր որոշակի օգուտներ, քանի որ նրա հեղինակության շնորհիվ իշխող կուսակցությունը մեծ թվով ձայներ էր ստանալու հայ համայնքից: Նկատենք նաեւ, որ Դեմոկրատական կուսակցության քաղաքական հակառակորդը՝ քեմալական Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը, որը մինչեւ 1950թ. միանձնյա իշխում էր Թուրքիայում, ազգային փոքրամասնությունների եւ հատկապես հայերի նկատմամբ վարել էր, մեղմ ասած, ծայրահեղ խտրական քաղաքականություն: Դա էլ ավելի սրվեց Թուրքիայի երկրորդ նախագահ եւ ԺՀԿ առաջնորդ Իսմեթ Ինենյուի կառավարման տարիներին՝ 1938-1950թթ. եւ ազգային փոքրամասնությունները խոր հակակրանք էին տածում վերջինիս հանդեպ: Մկրտիչ Շելեֆյանի քաղաքական նախընտրության մեջ որոշակի դեր է ունեցել նաեւ այդ հանգամանքը:

Ինչեւէ, Մկրտիչ Շելեֆյանը մտել է մեծ քաղաքականություն եւ 1957թ. ընտրվել Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավոր: Հարկ է հատուկ շեշտել այն ուշագրավ փաստը, որ պատգամավոր ընտրվելուց հետո

Շելեֆյանը ընդգրկվել է խորհրդարանի բյուջեի հանձնաժողովի մեջ [4, 11.08.1984], որտեղ քննարկվել են տարբեր աստիճանի պետական գաղտնիքներ՝ կապված նաեւ ազգային անվտանգության համակարգի հետ եւ շատ հաճախ հանձնաժողովի նիստերը անցկացվել են դռնփակ: Մկրտիչ Շելեֆյանը ազգային փոքրամասնությունների միակ ներկայացուցիչն էր, ով ընդգրկվել է այդ հանձնաժողովում եւ փաստորեն մուտք է ունեցել պետական գաղտնիքներին: Պատգամավոր աշխատելու տարիներին Շելեֆյանը լայն թափով շարունակել է հայ համայնքի խնդիրների լուծմանը ուղղված իր գործունեությունը եւ այդ ընթացքում համայնքում դրական առաջընթաց է նկատվել: Չպետք է անտեսենք նաեւ այն իրողությունը, որ թուրքական խորհրդարանի պատգամավոր լինելով հանդերձ՝ Շելեֆյանը մշտապես կարեւորել է իր հայկական ինքնությունը եւ նրանց տանը անգամ արգելված է եղել թուրքերենն ու թուրքական երաժշտությունը:

1960թ. Թուրքիայում տեղ ունեցավ ռազմական հեղաշրջում, տապալվեց Դեմոկրատական կուսակցության իշխանությունը եւ ձերբակալվեցին մոտ 600 նախկին պետական պաշտոնյաներ, պատգամավորներ [5]: Ձերբակալվածների մեջ էր նաեւ Մկրտիչ Շելեֆյանը: Նրան առաջարկվել է մեղադրանք հակասահմանադրական գործողությունների համար: Նախկին քաղաքական վերնախավին տեղափոխել են Յասըադա կղզի, որտեղ էլ տեղի են ունեցել դատավարությունները: Ձերբակալվել է նաեւ մյուս հայ պատգամավորը՝ բժիշկ Զաքար Թարվերը: Ինչպես հետագայում պատմել է Մկրտիչ Շելեֆյանը, Յասըադա կղզի տեղափոխվելու ժամանակ ուղեկցող զինվորներից մեկը հրացանով հարվածել է Զաքար Թարվերի գլխին եւ ստացված վնասվածքից նա մահացել է բանտում՝ մեկ ամիս անց: Ուշագրավ է, որ Շելեֆյանը խիզախ պահվածք է դրսեւորել եւ՝ նախաքննության, որն ուղեկցվել է դաժան կտտանքներով, եւ՝ դատական նիստերի ժամանակ: Մասնավորապես՝ առաջադրված մեղադրանքի շրջանակներում քննվել է խորհրդարանի մի նիստ եւ այնտեղ ընդունված որոշումը: Չնայած որ Շելեֆյանը այդ նիստին մասնակցած չի եղել, սակայն կուսակցական համերաշխությունից ելնելով հայտարարել է. «Այդ որոշումներուն ատեն ես Անգարա չէի, բայց եթէ Անգարա գտնուէի, ես ալ ի նպաստ կը քուէարկէի: Հետս վարուեցէք

այնպէս ինչպէս պիտի վարուէիք եթէ հոն ըլլայի» [4, 15.08.1984]: Դատավարության արդյունքում Շելեֆյանը դատապարտվել է 4,5 տարվա ազատազրկման եւ տեղափոխվել Կեսարիայի բանտ, իսկ նրա ամբողջ ունեցվածքը բռնագրավվել է: Հետաքրքիր է, որ Շելեֆյանը իր ազատազրկումը անցկացրել է Թուրքիայի երրորդ նախագահ Ջելալ Բայարի հետ նույն խցում: Երիտթուրքական կուսակցության նախկին ակտիվ գործիչ Ջելալ Բայարը ռազմական հեղաշրջումից հետո դատապարտվել է մահվան, սակայն առաջացած տարիքի պատճառով պատիժը փոխվել է ցմահ բանտարկության: Ավելի ուշ նա ազատ է արձակվել. մահացել է 1986թ.՝ 103 տարեկանում: Մկրտիչ Շելեֆյանի հետ նույն բանտախցում անցկացրած տարիների ընթացքում նրանք բավական մտերմացել են եւ զրույցների ընթացքում Շելեֆյանը բազմաթիվ դրվագներ է պատմել հայ ժողովրդի պատմությունից, մշակույթից, ավանդույթներից, ինչից հետո Բայարը հայտարարել է, որ նոր նոր է սկսում ճանաչել հայերին եւ այն էլ Շելեֆյանի շնորհիվ:

1962թ. նորաստեղծ Արդարություն կուսակցությունը սկսել է ջանքեր գործադրել ռազմական հեղաշրջումից հետ դատապարտված պաշտոնյաներին եւ պատգամավորներին ազատ արձակելու ուղղությամբ եւ հենց նույն տարում 280 մարդ ազատվել է բանտերից, այդ թվում եւ Շելեֆյանը [5]: Ազատ արձակվելուց հետո Մկրտիչ Շելեֆյանը սկսել է քայլեր ձեռնարկել իր բիզնեսի վերականգնման ուղղությամբ: Ստեղծված իրավիճակում նա հրաժարվել է նորից մտնել ակտիվ քաղաքականության մեջ եւ գերադասել է ոչ հրապարակային աջակցել Արդարություն կուսակցության գործունեությանը՝ կրկին ընդդեմ Իսմեթ Ինենյուի: Նա մտերմացել է թուրքական քաղաքական դաշտի նոր եւ ակտիվ գործիչներից մեկի՝ Սուլեյման Դեմիրելի հետ, ով շուտով դարձել է վարչապետ (հետագայում՝ 1993-2000թթ. Թուրքիայի նախագահ): Այդ շրջանի իր ոչ հրապարակային գործունեության մասին հետագայում Շելեֆյանը նշում է. «Ես ալ մէկն եմ անոնցմէ որոնք չատ աշխատեցան որպէսզի Ինէօնիւի կառավարութեան անկումէն վերջ 1965-ին երեքով քօալիսիոն մը կազմուի» [4, 18.08.1984]:

Հրաժարվելով առաջարկվող պաշտոններից՝ Շելեֆյանը կրկին լծվել է հայ համայնքի խնդիրների լուծման գործին եւ վարչապետ Դեմիրելի հետ ունեցած իր մտերմությունը կրկին ծառայեցրել համայնքային շահերին: 1960թ. ռազմական հեղաշրջումից հետ լուծարվել եւ արգելվել է հայ համայնքի աշխարհիկ կառավարման մարմինը՝ Թուրքիայի հայերի ազգային կենտրոնական վարչությունը, սակայն այդ պայմաններում եւս Շելեֆյանը մնացել է համայնքի դե-ֆակտո աշխարհիկ ղեկավարը եւ շարունակել է ապահովել թուրքական կառավարության եւ հայ համայնքի միջեւ կապը [5]: Այդ շրջանում նա դարձել է համայնքային ամենամեծ հաստատության՝ Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ: Կարեւոր է նկատել, որ Մկրտիչ Շելեֆյանը կարողացել է իր կապերն ու հեղինակությունը օգտագործել ոչ միայն նեղ համայնքային խնդիրների լուծման համար, այլեւ ավելի լայն համազգային խնդիրներում եւս: Նմանատիպ օրինակներից հարկ ենք համարում մեջբերել մեկը, որը, թերեւս, առաջին անգամ է հրապարակվում եւ դրվում գիտական շրջանառության մեջ: Այսպես, 1965թ. ապրիլի 24-ին, երբ Երեւանում Ծիծեռնակաբերդում պատրաստվել են նշել Հայոց ցեղասպանության 50 ամյակը, թուրքական իշխանությունները որպես հակաքայլ պահանջել եւ ստիպել են, որպեսզի Ստամբուլի հայ համայնքը քաղաքի կենտրոնական հրապարակներից մեկում՝ Թաքսիմում բողոքի ցույց կազմակերպի ընդդեմ ցեղասպանության հարցի: Սրանով թուրքական իշխանությունները փորձում էին սեպ խրել հայության մեջ եւ աշխարհին ցույց տալ, որ Թուրքիայի հայերը այլ կարծիքի էին: Ինչեւէ, համայնքի հոգեւոր իշխանությունները՝ ի դեմս երջանկահիշատակ պատրիարք Շնորհք Գալուստյանի եւ աշխարհիկ իշխանությունները՝ ի դեմս Մկրտիչ Շելեֆյանի համագործակցաբար կարողացել են տապալել թուրքական իշխանությունների վերոհիշյալ ծրագիրը եւ նշանակված ժամին Թաքսիմ հրապարակում հավաքվել են ընդամենը 20 մարդ: Թուրքական բազմաթիվ լրատվամիջոցներից եկած լրագրողները ձեռնունայն են հեռացել եւ միջազգային մամուլի համար նախատեսվող ռեպորտաժները չեն կայացել: Այս իրադարձությունից հետո Շելեֆյանը ամբողջովին իր վրա է վերցրել իշխանությունների ծրագրի տապալման

պատասխանատվությունը (ըստ երեւույթին պատրիարքին վտանգից զերծ պահելու համար): Այս առիթով Շելեֆյանին հրավիրել են Թուրքիայի ազգային անվտանգության Ստամբուլի վարչության պետի մոտ պարզաբանումների: Այստեղ էլ ցուցաբերելով համարձակություն՝ Շելեֆյանը հայտարարել է, որ 1915 թվականին անձամբ իր ընտանիքից 10 հոգի է զոհվել եւ ապրիլի 24-ը հայերի համար սգո օր է, ոչ թե հրապարակային միջոցառումների: Ընդհանրապես Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ Շելեֆյանը դրսեւորել է հստակ դիրքորոշում. հրապարակային ելույթների ժամանակ չի անդրադարձել այդ թեմային, սակայն միեւնույն ժամանակ չի էլ արտահայտել թուրքական պաշտոնական թեզի պարտադրած մոտեցումները: Իսկ ոչ հրապարակային շփումների ժամանակ, անգամ վարչապետ Դեմիրելի հետ զրույցում, հստակ պնդել է, որ Թուրքիան պետք է ընդունի Հայոց ցեղասպանության փաստը, ինչին Դեմիրելը պատասխանել է, որ այդ դեպքում նրանք կկորցնեն իշխանությունը:

Մկրտիչ Շելեֆյանի դիվանագիտական հմտությունները դրսեւորվել են նաեւ արտաքին քաղաքականության ոլորտում. 1960-ականներին նա ակտիվ, բայց ոչ հրապարակային դեր է խաղացել թուրք-հունական բանակցություններում: Կիպրոսի խնդրի հետ կապված Թուրքիայի եւ Հունաստանի լարված հարաբերությունների ժամանակ Շելեֆյանը մի քանի գաղտնի հանդիպումներ է ունեցել հունական զինվորական եւ քաղաքական բարձրաստիճան ղեկավարների, այդ թվում եւ՝ վարչապետեր Պապանդրեուի ու Ստեֆանոպուլոսի հետ: Այս ամենի արդյունքում կասեցվել է թուրքական ռազմական ներխուժումը Կիպրոս: Այդ իրադարձություններից տարիներ անց էլ 1984թ. Մկրտիչ Շելեֆյանը չի բացում բոլոր փակագծերը կապված Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ իր միջնորդական գործունեության մասին. «Դեռ ժամանակը չէ հասած հրապարակելու թէ ինչեր էին անոնք: Պետական գաղտնիք են եւ մինչեւ այսօր չեն հրապարակուած: Օր մը եթէ ժամանակը գայ, այդ մասին ալ կը խօսինք» [4, 18.08.1984]: Բանակցելու համար նրա թեկնածության ընտրությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Շելեֆյանը մի կողմից եղել է Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի վստահելի մարդը, իսկ մյուս կողմից մեծ հեղինակություն է վայելել հունական կողմում: Այդ

վստահությունը բխել է նաեւ նրանից, որ Շելեֆյանը ժամանակին մեծ ուշադրություն է դարձրել եւ զգալի օգնություն ցույց տվել Ստամբուլի հունական համայնքին եւ Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքությանը: Պոլսո հունաց տիեզերական պատրիարք Աթենագորասը հիանալի հարաբերություններ է ունեցել Մկրտիչ Շելեֆյանի հետ, իսկ վերջինս իր այդօրինակ վերաբերմունքը հունական համայնքի նկատմամբ բացատրել է նրանով, որ փոքրամասնությունները Թուրքիայում ունեն նմանատիպ խնդիրներ եւ պետք է համախմբված լինեն, քանի որ մեկի տկարացումը ազդելու է մյուսի վրա: Մեզ մոտ է գտնվում Հունաց պատրիարքի տված շնորհակալագիրը Մկրտիչ Շելեֆյանին, որը պահվում է նրա անձնական արխիվում: Շնորհակալագրում երախտիքի բազմաթիվ խոսքեր են շռայլված, ինչպիսիք են. «Երախտապարտ ենք Ձերդ սիրելի Ազնվափայլությանը մեր գործերի մասին հետաքրքրվելու, ինչպես եւ Ձեր անգնահատելի ծառայությունների համար» [6]:

1960-ական թվականների վերջին Թուրքական քաղաքական, լրատվական դաշտում սաստկացել են սպառնալիքները, ճնշումները Մկրտիչ Շելեֆյանի հասցեին: Նրա անվան շուրջ հյուսվել են աղմկահարույց պատմություններ եւ դրանով էլ ավելի բորբոքել մոլեռանդ շրջանակներին: Հալածանքների այդ ողջ համալիրի մեջ առաջնային էր նրա հայկական ծագումը, որը Թուրքիայում միշտ էլ թշնամաբար է ընկալվել: Շելեֆյանը միաժամանակ դարձել է եւ՛ աջ ծայրահեղականների, եւ՛ ձախ ծայրահեղականների թիրախը: Սպառնալիքները նրա հասցեին գնալով ահագնացել են եւ սկսել են վերաբերել նաեւ ընտանիքի անդամներին, մասնավորապես՝ աղջկան: 1970թ. Ստամբուլում սպանված մի վարձու մարդասպանի գրպանից ոստիկանները գտել են Շելեֆյանի անունն ու հասցեն, այսինքն՝ սպանվելու վտանգը ավելի ռեալ էր դարձել [4, 18.08.1984]: Այս ամենը հարկադրել են Մկրտիչ Շելեֆյանին մտածելով ընտանիքի անվտանգության մասին՝ նրանց հեռացնել Թուրքիայից: Այդ ժամանակ նրա որդին՝ Արդենը ուսանելիս է եղել Շվեցարիայում եւ Շելեֆյանը որոշում է այնտեղ տեղափոխել կնոջն ու աղջկան, իսկ ինքը վերադառնա Թուրքիա եւ փորձի դիմակայել: Սակայն Թուրքիայից նրա հեռանալուց երկու օր անց ամբողջ Թուրքական մամուլը հեղեղվել է այն տեղեկությամբ, թե իբր

Մկրտիչ Շելեֆյանը փախել է երկրից՝ իր հետ տանելով ահռելի գումար: Ստեղծված իրավիճակը արդեն անհնար է դարձրել նրա վերադարձը Թուրքիա, իսկ իր մտերիմները այդ թվում եւ քաղաքական գործիչները խուսափել են օժանդակել նրան՝ վախենալով իրենց քաղաքական հեղինակության եւ անվտանգության համար:

Այդպիսով՝ 1970թ. Մկրտիչ Շելեֆյանը հաստատվում է Շվեցարիայում, որտեղ դառնում է չվեցարահայ համայնքի ազդեցիկ անուններից մեկը: Ինչպես գրում է "The Armenian Reporter" թերթը. «Տարիներ շարունակ Շվեցարիայում բնակվելով՝ Շելեֆյանը դարձավ Ժնեւի փոքրիկ հայ համայնքի առաջնորդ եւ արժանացավ համայնքի ու ամբողջ աշխարհի եկեղեցական առաջնորդների վստահությանը» [5]: Հայաստանի ազգային արխիվում ՀԽՍՀ Սփյուռքահայերի հետ մշակութային կապերի հանրապետական կոմիտեի ֆոնդերից մեկում հանդիպում ենք Շելեֆյանի՝ Շվեցարիայում իրականացրած գործունեության մասին հետեւյալ տեղեկությանը. «Շելեֆյանը պետական գործչի իր ողջ փորձը, դիվանագիտական ընդունակությունները եւ, ի վերջո, ժամանակը ի սպաս է դրել հայ համայնքի համար» [7]: Մկրտիչ Շելեֆյանը լուրջ ներդրում է ունեցել չվեցարահայ համայնքի եւ Խորհրդային Հայաստանի կապերի ամրապնդման հարցում: Սկսած 1975 թվականից նա պարբերաբար այցելել է Խորհրդային Հայաստան եւ այցերի ընթացքում բավական լավ հարաբերություններ է ձեւավորել այն ժամանակվա Հայաստանի քաղաքական եւ հոգեւոր իշխանությունների, մտավորականների հետ: Շելեֆյանի վրա իրոք մեծ տպավորություն է թողել Հայաստանը եւ իր այցերի մեկնարկից արդեն երկու տարի անց՝ 1977թ. ՀԽՍՀ Սփյուռքահայերի հետ մշակութային կապերի հանրապետական կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանին ուղղված նամակում նա չի թաքցնում իր հիացմունքն ու հոգեկան ապրումները. «Ուրախությունն պատճառէց նաեւ մեզի այն զգալի բարեփոխումները, գրեթէ ամէն մարգի մէջ: Սեւանի ճամփուն եզերումներու սարքաւորումը ո՞րքան գունագեղ ու չէնչող է: Մեր հայրենիքը հետզհետէ կը լքէ իր նախկին տխուր դիմագիծը՝ դառնալու համար հոյակապ, արդիական, գուարթ ու չէնչող Հայաստան մը, նման իր պատմութեան որ թաղելով իր տխուր անցեալը կը յառաջանայ դէպի երջանիկ ու փայլուն ապագայի

մը: Մեր արտասահմանի հայը կը տառապի որքան ալ ան ըլլայ բարեկէցիկ ու հարուստ: Փայլուն արտաքինով մեր տխուր հոգները կը ջերմանան ու կերջանկանան միմիայն հայրենիքի տաքուկ հողերուն եւ սրտերուն մէջ: Թող անոնք մասնաւորաբար որ կուգեն մեկնիլ Հայաստանեն գիտնան Հայրենիքին այս արժէքը» [8]: Տարիներ անց՝ 1987թ. մայիսի 23-ին ՀԽՍՀ Սփյուռքահայերի հետ մշակութային կապերի հանրապետական կոմիտեի այն ժամանակվա նախագահ Կ.Դալլաքյանին ուղղված իր նամակում, խոսելով չվեցարահայ համայնքի եւ Խորհրդային Հայաստանի հարաբերություններում նկատված առաջընթացի ու այդ ուղղությամբ իր ներդրած ջանքերին մասին՝ Շելեֆյանը նշում է. «Պիտի ուզէի, վերստին, յիշեցնել թէ, նախապէս գաղութիս ժանգոտած հունէն գամը դուրս քաշելը եւ դէպի Հայրենիք ուղղիլը, շատ աւելի դժուար էր, քան թէ այժմ» [9]:

1980թ. Թուրքիայում կրկին տեղի է ունենում ռազմական հեղաշրջում եւ որոշ ժամանակ անց՝ 1983թ. թուրքական կառավարությունը անդրադառնում է Մկրտիչ Շելեֆյանին. ըստ թուրքական իշխանությունների, Շելեֆյանը զբաղվել է «հակաթուրքական գործունեությամբ» եւ մինչեւ 1983թ. օգոստոսի 31-ը Թուրքիա չվերադառնալու դեպքում զրկվելու էր այդ երկրի քաղաքացիությունից եւ պետականացվելու էին նրա գույքն ու ունեցվածքը: Այս մասին տեղեկանալով՝ Մկրտիչ Շելեֆյանը 1983թ. օգոստոսի 31-ին նամակ-հեռագիր է հղում Թուրքիայի նախագահ Քենան Էվրենին, իսկ նամակի կրկնօրինակը՝ ներքին գործերի նախարար Սելահեթթին Զեթիներին: Մեզ մոտ գտնվող այս ուշագրավ նամակում Շելեֆյանը Թուրքիայի կառավարության կողմից այդ որոշման ընդունման ժամանակի ընտրությունը պայմանավորում է ԱՍԱԼԱ-ի Օռլիի գործողության հետ: Իսկ անդրադառնալով իր գույքի առգրավման հարցին՝ Շելեֆյանը գուգահեռներ է տանում Հայոց ցեղասպանությունից հետո հայերի լքված գույքի խնդրի հետ. «Իրավական պետությունները բարկությամբ չեն առաջնորդվում եւ այս վերջին ունեցվածքն էլ տխրահռչակ «լքյալ գույքի» օրենքը հիշեցնող ձեւով չեն բռնագրավում« [10]: Խոսելով իրեն Թուրքիայի քաղաքացիությունից զրկելու սպառնալիքին՝ Մ. Շելեֆյանը հատուկ ընդգծելով նշում է. «Եկող եւ գնացող ոչ մի կառավարություն չի կարող ինձնից խլել

այն իրողությունը, որ ես այս հողերի հարազատ զավակն եմ, հողեր, որտեղ դարերով ծնվել ու ապրել են իմ նախնիները: Եվ մի կարծեք, որ ես այս հեռագիրը ուղարկում եմ ձեր որոշումը փոխելու նպատակով: Իմ ցեղի մեջ խնդրել, մուրալ, պնակալեզություն բառերը գոյություն չունեն» [10]: Այս նամակից տասը ամիս անց՝ 1984թ. հունիսի 22-ին Շվեցարիայում (Ժնեւ) Թուրքիայի հյուպատոսությունից փոխհյուպատոս Օմեր Թարքանի ստորագրությամբ պաշտոնական գրություն է ուղարկվում Մկրտիչ Շելեֆյանին, որտեղ նշված է. «Քանի որ հրապարակման օրվանից մեկ ամսվա ընթացքում հայրենիք չեք վերադարձել եւ համապատասխան մարմիններին չեք հանձնվել՝ Թուրքիայի քաղաքացիության թիվ 403 օրենքի 25-րդ հոդվածի համաձայն Թուրքիայի Նախարարների խորհրդի 27.03.1984 թվագիր 84/7857 որոշմամբ զրկվել եք Թուրքիայի քաղաքացիությունից: Նույն որոշմամբ նախատեսվում է ձեր գույքը փոխանցել գանձարանին» [11]: Ավելին՝ թուրքական իշխանությունները Մկրտիչ Շելեֆյանի՝ Թուրքիայի նախագահ Քենան Էվրենին ուղված նամակը համարելով անարգանք եւ սպառնալիք՝ նրա դեմ քրեական գործ են հարուցում Անկարայի դատարանում:

Այսպիսով կարող ենք նշել, որ 20-րդ դարի պոլսահայ եւ սփյուռքահայ իրականության մեջ Մկրտիչ Շելեֆյանը քաղաքական, համայնքային գործչի, հմուտ դիվանագետի եւ գործարարի վառ կերպար է: Իր գործունեության մեծ մասը ծավալելով Թուրքիայում՝ նա կարողացել է պահպանել եւ հպարտանալ իր ազգային ինքնությամբ, արժանապատիվ պահվածքով հասել է որոշակի դիրքերի եւ այդ ամենը ծառայեցրել համայնքային ու ազգային շահերին: Մկրտիչ Շելեֆյանի օրինակը նաեւ ցույց է տալիս, որ ցանկության եւ համարձակության դեպքում հնարավոր է հայկական նկարագիրը պահպանել եւ հայեցի գործել անգամ թուրքական դժնդակ իրականության մեջ:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ozdoan G., Ustel F., Karakal K., Kentel F., Turkiyede Ermeniler: Cemaat-Birey-Yurtta, stanbul, 2009.

Hur A., Keresteciyan olmak m zor, Turker olmak m?, Agos, 15,04, 2011.

Կոմիկեան Վ., *Մկրտիչ Շէյլէֆեանի քաղցր յիշատակին*, *Նոր Մարմարա*, 26,01,1988:

Մկրտիչ Շէյլէֆեանը կը լուսաբանէ (Ալթան Օյմէնի հարցազրույցը Մկրտիչ Շելեֆյանի հետ), *Նոր Մարմարա*, 8-20, 08,1984:

Mr. M. Shelefyans Life Takes a New Turn as He Is Imprisoned After Military Coup, The Armenian Reporter, New York, 13,09,1984.

Հունաց պատրիարք Աթենագորասի շնորհակալական ուղերձը Մկրտիչ Շելեֆյանին, *Մ. Շելեֆյանի անձնական արխիվ*:

Հայաստանի ազգային արխիվ, *ֆոնդ* 875, *ցուցակ* 16, *գործ* 103:

Հայաստանի ազգային արխիվ, *ֆոնդ* 875, *ցուցակ* 8, *գործ* 209:

Հայաստանի ազգային արխիվ, *ֆոնդ* 875, *ցուցակ* 15, *գործ* 523:

Մկրտիչ Շելեֆյանի նամակը Թուրքիայի նախագահ Քենան Էվրենին, *Մ. Շելեֆյանի անձնական արխիվ*:

Ժնեւում Թուրքիայի փոխհյուպատոս Օմեր Թարքանի պաշտոնական գրությունը Մկրտիչ Շելեֆյանին, *Մ. Շելեֆյանի անձնական արխիվ*:

Ծանոթագրություններ

Հոդվածն արտատպված է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «21-րդ դար» ամսագրի 2011թ. թիվ 5 համարից:

1. *Հոդվածում օգտագործել ենք Մկրտիչ Շելեֆյանի անձնական արխիվում (ԺՆ§) պահվող արժեքավոր § ուշագրավ փաստաթղթեր, որոնց, ինչպես նա§ Շելեֆյանի գործունեությանը վերաբերող բազմաթիվ այլ*

տեղեկությունների, համար շնորհակալություն ենք հայտնում Արդեն Շելեֆյանին:

2. Ընդհանուր առմամբ Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում ազգային ժողովի պատգամավոր են դարձել ազգային փոքրամասնությունների 24 ներկայացուցիչ՝ ներառյալ 2011 թվականին Մարդինից ընտրված ասորի փաստաբան Էրոլ Դորան:

3. Խոսելով ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառված հալածանքների մասին՝ չենք կարող չանդրադառնալ 1955թ. սեպտեմբերի 6-7-ը Ստամբուլում § Իզմիրում տեղի ունեցած հայերի ու հույների նկատմամբ ջարդարարություններին, որոնք կազմակերպված էին իշխանությունների կողմից, իսկ այդ ժամանակ արդեն իշխում էր Դեմոկրատական կուսակցությունը: Սա վկայում է այն մասին, որ անկախ իշխանության ղեկին գտնվողների քաղաքական կողմնորոշման, ազգային փոքրամասնությունների նկատմամբ թուրքական քաղաքականությունը եղել է ընդգծված թշնամական: 1955թ. սեպտեմբերի 6-7-ի հարձակումների ժամանակ ավերվել են բազմաթիվ տներ, խանութներ, արհեստանոցներ, բռնությունների են ենթարկվել հարյուրավոր մարդիկ: Այդ դեպքերից հետո թուրքական կառավարությունը փորձել է մեղմել իրավիճակը՝ փոխհատուցում տալով տուժածներին § Մկրտիչ Շելեֆյանը անձամբ է բանակցել վարչապետի քարտուղարության հետ այդ հարցերի շուրջ:

4.Հայոց ցեղասպանությունից հետո Շվեցարիայում ստեղծվել է որբախնամ միություն, որի ջանքերով այնտեղ են տեղափոխվել բազմաթիվ հայ որբեր (տես՝ Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 875, ցուցակ 16, գործ 103, թ. 1): Այս որբերն են հետագայում կազմել շվեցարահայ համայնքի կորիզը, որին 20-րդ դարի կեսերից սկսած ավելացել են Թուրքիայից § Մերձավոր Ար§ելքի այլ երկրներից արտագաղթած հայերը:

Armenians in Turkey

From Wikipedia, the free encyclopedia

Armenians presently living in Turkey are a remnant of what once was a much larger community that existed for hundreds of years and long before the establishment of the Sultanate of Rum. Estimates for the number of Armenian citizens of the Ottoman Empire in the decade before World War I range between 1.3 to 1.8 million. During the Ottoman Empire, the Armenians of Turkey were active in business and trade, just like the Greeks and Jews[3] of Turkey.

When Constantinople finally became a part of Ottoman Empire, financial support was given to Orthodox Armenians by the Sultan, so they could build their churches on the land of the Empire. Many of the Armenian churches in Anatolia and Istanbul, were built in 1453 or after reflecting tolerance of the Ottoman Empire to other ethnic groups and various religions living under their control during that time.

Starting in the late nineteenth century, political instability, dire economic conditions, and continuing ethnic tensions prompted the emigration of as many as 100,000 Armenians to Europe, the Americas and the Middle East. This massive exodus created the modern Armenian diaspora worldwide based on mainly Ottoman Armenian populations emigrating in large numbers, in addition to some emigration from the Caucasus which was more towards Russia.

There was conflict between Armenians and Turks between 1892 and 1915. The Armenian Genocide[4] followed in 1915–1916 until 1918, during which the Ottoman government of the time ordered the deportation and killing of 0.9 to 1.2 million Armenians because of alleged political and security considerations. These measures affected a huge majority of Armenians, an estimated 75%-80% of all the Armenians living in the Ottoman Empire during World War I. Many died directly through Ottoman massacres and atrocities, while others died as a result of mass deportations and forced population movements, and more through Kurdish militia attacks.

As for the remaining Armenians in the Eastern parts of the country, they found refuge by 1917–1918 in the Caucasus and eventually within the areas controlled by the newly established Democratic Republic of Armenia and never returned to their original homes in Eastern Turkey (composed of the 6 vilayets, namely (Erzurum, Van, Bitlis, Diyarbekir, Mamuretelaziz, and Sivas).

Some Armenians, about 300,000 according to some estimates, were adopted by Turks and Kurds or married into Muslim populations in a

process of Turkification and Kurdification to avoid facing a similar fate.[5][6]

Most of the Armenian survivors ended up in northern Syria and the Middle East in general, with some temporarily returning to their homes in Turkey at the end of World War I particularly during the French Mandate, as a result of France being allocated the control of southeastern Turkey and all of Cilicia according to the Sykes–Picot Agreement. The Armenian population suffered a final blow with ongoing massacres and atrocities throughout the period 1920–1923, during the Turkish War of Independence, those suffering the most being the remnants of the Armenians remaining in the East and the South of the country, in addition to the Greeks in the Black Sea Region. Mass deportations of Turkey's surviving Armenian population continued especially after the withdrawal of the French forces from the area. The few remaining Armenians mostly fled.

By the end of the 1920s, only a handful of Armenians were left in Turkey scattered sparsely throughout the country, with the only viable Armenian population remaining in the Istanbul area and its environs.

The present Armenian population is estimated between 40,000 and 70,000 mostly living in Istanbul and the environs. Even the small number of actual Turkish Armenians living in Turkey is diminishing further due to emigration to Europe, Americas and Australia.

The community is recognized as a separate "millet" in the Turkish system and has its own religious, cultural, social and educational institutions and its distinct media. The Turkish Armenian community struggles to keep its own institutions and schools open and media running, against diminishing demand due to emigration and quite considerable economic sacrifices.

The Turkish Armenian community is divided into a majority Apostolic Orthodox Armenians belonging to the Armenian Apostolic Church with a small minority belonging to the Armenian Catholic Church and the Armenian Evangelical Church.

Vakıflı Կ**ֆ**ուՅ (Armenian: Վաքիֆ — Vakif) is the only remaining ethnic Armenian village in Turkey.[7][8] Located on the slopes of Musa Dagh in the Samandağ district of Hatay Province, the village overlooks the Mediterranean Sea and is within eyesight of the Syrian border. It is home to a community of about 130 Turkish-Armenians.[8]


Hamsheni woman in traditional dress

The Hemshin Peoples are a number of diverse groups of people who in the past or present have been affiliated with the Hemşin area[9][10][11] which is in Turkey's eastern Black Sea region.

They are called (and call themselves) as Hemshinli (Turkish: Hemşinli), Hamshenis, Homshentsi (Armenian: Համշենի) meaning resident of Hemshin (historically Hamshen) in the relevant language.[12] The term "The Hemshin" is used also in some publications to refer to Hemshinli.[13][14]

The area was annexed by the Ottoman Empire in the 15th century and during the Ottoman period, there was a process of migrations and Islamization.[15] The details and the accompanying circumstances for the migrations and the Islamization process during the Ottoman era are not clearly known and documented.[16]

Most sources agree however that prior to Ottoman era, the great majority of the residents of Hemshin were mainly ethnic Armenians and members of the Armenian Apostolic Church and practiced Christianity. They also kept a lot of the elements of Armenian ethnicity in their traditions and local language to this day.

As a result of those developments, distinctive communities with the same generic name have also appeared in the vicinity of Hopa, Turkey as well as in the Caucasus. Those three communities are almost oblivious to one another's existence.[17]

Within Turkey, are found the Hemshinli of Hemshin proper (also designated occasionally as western Hemshinli in publications) are Turkish-speaking Sunni Muslims who mostly live in the counties (ilçe) of Çamlihemşin and Hemşin in Turkey's Rize Province.

Also in Turkey are the Hopa Hemshinli (also designated occasionally as eastern Hemshinli in publications) are Sunni Muslims and

mostly live in the Hopa and Borçka counties of Turkey's Artvin Province. In addition to Turkish, they speak a dialect of western Armenian they call "Homshetsma" or "Hemşince" in Turkish.[18]

In addition, outside the republic of Turkey, Homshentsik (also designated occasionally as Northern Homshentsik in publications) are Christians who live in Abkhazia and in Russia's Krasnodar Krai. They speak Homshetsma as well.[19] There are also some Muslim Hemshinli living in Georgia and Krasnodar, Russia and some Hemshinli elements amongst the Meskhetian Turks.[20]

